ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

ԱՌԱՔԵԼ ԿՈՍՏԱՆՅԱՆՑԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՏՉԱՅ ՎԱՆՈՒՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Առաքել վարդապետ Կոստանյանցի «Պատմութիւն Գտչայ վանուց» աշխատության ձեռագիրը պահվում է Երեւանի Մաշտոցի անվան Մատենադարանում, 3966 թվահամարի տակ[1]: Ինչպես երեւում է ձեռագրի տիտղոսաթերթի վրա առկա «Խ. վարդապետ» մակագրությունից եւ Հ. Թոփչյանի կազմած ձեռագրացուցակից, սույն ձեռագիրը, նախքան Մատենադարանի սեփականությունը դառնալը, պատկանել է հայտնի հնագետ ու բանահավաք Խաչիկ ծայրագույն վարդապետ Դադյանին[2]:

Այս աշխատության հեղինակ Առ. Կոստանյանցի պատմագրական ժառանգությունը վաղուց իր վրա է հրավիրել հետազոտողների ուշադրությունը: Արցախի պատմությամբ զբաղվողներին նա առավելապես հայտնի է իր «Պատմութիւն Արցախի» երկհատոր աշխատությամբ[3], որը հանդիսացել է Բաֆֆու «Խամսայի մելիքությունները» ուսումնասիրության աղբյուրներից մեկը: Այդ առումով ավելորդ չէ այստեղ բերել Բաֆֆու խոսքը այս երկի մասին, մանավանդ որ այն չափազանց բնութագրական է նաեւ սույն աշխատության համար. «Առաքել վարդապետը, իրավ է, իր պատմության մեջ ժամանակագրական կարգ չէ պահպանել, նյութերը իրանց տեսակի համեմատ չէ դասավորել, եւ նրա աշխատությունը ավելի մի անկապ հավաքածու է, քան թե պատմություն, այսուամենայնիվ նրա գրքերը բովանդակում են իրանց մեջ թեեւ անմշակ, բայց բավական առատ նյութ պատմության համար: Երկու հատորները բաղկացած են 75 ընդարձակ գլուխներից եւ 428 երեսներից... Առաքել վարդապետի երկու հատորների մեջ կան եւ այնպիսի գլուխներ, որ կարող են ծառայել իբրեւ աղբյուր Ղարաբաղի մելիքների պատմության համար... Իսկ որ ամենից հետաքրքիրն է, դա է մի ժամանակագրական ցուցակ Ղարաբաղի նշանավոր անցքերի մասին, սկսյալ 1721 թվականից մինչեւ 1813 թվականը: Այդ ժամա-

---

[1] Մատենադարանի ձեռագրացուցակում սույն ձեռագիրը ներկայացված է այսպես. «1884թ.: Թերթ՝ 11: Թուղթ: 21,5x16: Միապյուն: Նոտրգիր: Տող՝ 20-27: Կազմ՝ ստվարաթուղթ: Հիշատակարան հեղինակի՝ 1ա» (Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երեւան, 1965, էջ 1120):

[2] **Յ. Թոփչեան,** Յուցակ ձեռագրաց Խ. վրդ. Դադեանի, հ. Ա, Վաղարշապատ, 1898, էջ 102:

[3] Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 7822, 7823:

նակագրությունը, հեղինակի ասելով, դուրս է բերել նա մի ձեռագիր Մաշտոցից, որը գրված է եղել տեր-Գասպար քահանայի ձեռքով»[4]:

Վերջին տողերի հիման վրա Բ. Ուլուբաբյանը սխալմամբ ենթադրել է, որ եթե «նրա ժամանակագրությունն սկսվում է 1721 թվականից եւ ավարտվում 1813-ին, ուրեմն ինքն ապրել է XIX դարի առաջին կեսին»[5]: Մինչդեռ, «Պատմութիւն Արցախի» երկի առաջին հատորի հիշատակարանում Առ. Կոստանյանցը պարզ գրում է. «Ի թուականիս փրկչական 1858ին սկսեալ եւ ի 1868ին աւարտեալ յաղագս չգտանելոյն տեղեկութեանց»[6]: Նույն երկի երկրորդ հատորի հիշատակարանում արդեն կարդում ենք. «Նաեւ յիշել խնդրեմ զանպէտ բանասէր աշխատասիրող գրքոյս՝ Առաքել վարդապետ Կոստանեանց, միաբան սրբոյ վանիցն Գտչոյ. ի թուականիս փրկչական 1870 ամի սկսեալ եւ ի 1880 ամի աւարտեալ»[7], այսինքն՝ սույն աշխատությունը գրվել է 1858-1880 թթ. ընթացքում:

*Բացի այդ, երբ այս երկի ձեռագրերը վերադարձնելու առթիվ Ռաֆֆու չարակամները մամուլում բանավեճ են սկսել նրա դեմ, մեծ գրողն իր գրչի ողջ զորությամբ նրանց պատասխանել է. «Եթե արժանապատիվ հայր սուրբը կամենում է ետ ստանալ յուր տետրակները, մենք մեծ ուրախությամբ կվերադարձնենք **իրան՝ հայր սուրբին** (ընդգծումը Ռաֆֆունն է - Ա. Մ.), բայց ուրիշի ձեռքը չենք տա: Միայն մեզ պետք է նախ բանակցություններ անել նրա հետ, եթե նա չի ցանկանում յուր տետրակների այն տեղերը, որ պատմական նշանակություն ունեն, տպված տեսնել, այն ժամանակ ետ կուղարկենք»[8]: Վերոբերյալ տողերից պարզ երեւում է, որ Առ. Կոստանյանցը XIX դարի երկրորդ կեսի հեղինակ է՝ Ռաֆֆու ժամանակակիցը, ինչն ամենեւին էլ չի նսեմացնում նրա պատմագրական երկի արժեքը: Առանց այս երկի մենք առհասարակ չէինք ունենա Դիզակի մելիքության պատմությունը: Թերեւս, դա էլ ի նկատի ունենալով Հայոց ազգագրական ընկերությունը Առ. Կոստանյանցի աշխատության այդ հատվածը հրատարակել է որպես «Նիւթեր հայ մելիքութեան մասին» մատենաշարի Ա պրակ[9]:*

---

[4] **Ռաֆֆի,** Խամսային մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 9, Երեւան, 1987, էջ 609-610:

[5] **Բ. Ուլուբաբյան,** Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, Երեւան, 1998, էջ 351:

[6] ՄՄ, ձեռ. № 7822, էջ 6բ:

[7] ՄՄ, ձեռ. № 7823, էջ 8ա:

[8] **Ռաֆֆի,** Երկերի ժողովածու, հ. 12, Երեւան, 1999, էջ 15-16:

[9] **Առ. Կոստանեանց,** Դիզակի մելիքութիւնը, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պր. Ա, Վաղարշապատ, 1913:

* * *

Առաքել Կոստանյանցը, որը երկար տարիներ եղել է Գտչավանքի վանահայրը, այդ վանքի պատմությանը նվիրված սույն երկը գրել է 1884 թ., երբ արդեն լույս էր տեսել Բաֆֆու «Խամսայի մելիքությունները» աշխատությունը (Թիֆլիս, 1882), ուստի այն, ի տարբերություն հեղինակի վերոհիշյալ ձեռագրերի, չի օգտագործվել Բաֆֆու կողմից: Ավելին, Առ. Կոստանյանցն այս տետրը գրել է որպես իր «Պատմութիւն Արցախի» երկհատորյակի պակասների լրացում. «Յայսմ հատորի պատմագրութեան ցանկամ բովանդակել զայն ամենայն թերութիւնս, որ յետոյ շրջելով ընդ ամենայն անոտնակոխ տեղիս... աստի եւս արտագրեալ զպակասութիւնս անցեալ երկուց հատորոց պատմագրութեանց»[10]: Այդ առումով սույն ձեռագրի հաղորդումները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:

Անցնելով հրապարակվող աշխատության ներկայացմանը, նախ հարկ է նշել, որ «Պատմութիւն Գտչայ վանուց» խորագիրը հեղինակային չէ. ձեռագիրն այս վերտառությամբ նախ ներկայացվել է Խ. վրդ. Դադյանի ձեռագրացուցակում[11], իսկ հետագայում՝ նաեւ Մատենադարանի ձեռագրաց ցուցակում[12], ուստի մենք եւս նպատակահարմար գտանք պահել արդեն ավանդականացած վերնագիրը:

Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Գտչայ վանուց» աշխատությունն, ըստ բովանդակության, պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Այդ մասերից առաջինում հեղինակը ներկայացնում է Գտչավանքի իրեն նախորդած վանահայրերին՝ սկսած 1723 թվականից, երբ Դիզակ գավառի տիրակալ Մելիք-Եգանի կամքով այդ վանքի վանահայր դարձավ Մեսրոպ եպիսկոպոսը (մահ. 1747)[13]: Այնուհետեւ Առ. Կոստանյանցը հակիրճ ներկայացնում է նրան հաջորդած վանահայրերի՝ Տեր Սիմեոն եպիսկոպոսի եւ Հովհաննես վարդապետի պաշտոնավարության ընթացքում Գտչավանքի հետ կապված հիշարժան իրադարձությունները: Այս մասում (3ա) իր օգտագործած աղբյուրներից հեղինակը հիշատակում է Սարգիս Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատությունը (Տփխիս, հ. 1, 2, 1842-1858):

Երկի երկրորդ մասում հեղինակը, ավանդազրույցների հիման վրա, ներկայացնում է Անտոն մանկան նահատակության սրտառուչ պատմությունը, որը

---

[10] ՄՄ, ձեռ. № 3966, կամ այստեղ՝ Բնագիր, էջ 1ա (հրապարակմանս մեջ ձեռագրի էջահամարները նշված են, ուստի նույն համարներն այսուհետեւ նշելու ենք շարադրանքի մեջ):

[11] **Յ. Թոփճեան,** Յուցակ ձեռագրաց Խ. վրդ. Դադեանի, հ. Ա, էջ 102:

[12] Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1120:

[13] Դիվան հայ վիմագրության (այսուհետեւ՝ Դիվան), պր. V, Արցախ, կազմեց ***Ս. Բարխուդարյան,*** Երեւան, 1982, էջ 185:

տեղի է ունեցել Լենկ Թեմուրի աշխարհավեր արշավանքների ժամանակաշրջանում: Լենկ Թեմուրն արցախյան բանահյուսության մեջ ամենատարածված պատմավիպական կերպարներից մեկն էր, որի ասպատակությունների հետ կապված բազմաթիվ ավանդություններ է պահպանել Արցախի ժողովուրդը: Իսկ նրա ժամանակաշրջանի հետ կապված այս ավանդությունը, որն, անտարակույս, զուրկ չէ պատմական իրողության տարրերից, Առ. Կոստանյանցի շնորհիվ փրկվել է կորստից եւ հասել մեր օրերը:

Գրված լինելով հիմնականում ավանդազրույցների հիման վրա եւ հայ միջնադարյան «Վանից պատմութեանց» ոգով[14]*, այնուհանդերձ սույն երկը, հատկապես՝ հեղինակի ապրած ժամանակաշրջանի մասով, պարունակում է մի շարք ուշագրավ տեղեկություններ, որոնց վավերականությունն ապացուցվում է այլ սկզբնաղբյուրներով: Մասնավորապես, չափազանց կարեւոր նշանակություն ունի Գտչավանքի հողային սեփականության սահմանների մասին Առաքել Կոստանյանցի հաղորդումը: Այդ տեղեկության իսկությունը հաստատվում է իր իսկ կողմից Գտչավանքի ընդարձակ կալվածքների վերաբերյալ 1856 թ. դեկտեմբերի 1-ին Ղարաբաղի կոնսիստորիային ուղղված տեղեկագրով, որտեղ ներկայացված են գրեթե նույն սահմանները: «Պատիւ ունեմ յայտ առնել ամենայարգոյաբար Վիճակային Կանսիստորիիդ Ղարապաղու, - կարդում ենք այդ տեղեկագրում, - թէ՝ մնալով իմ յընթացս այսքան միջոցի ի վանսն Գտիչոյ՝ ես ինքնին որչափ նկատեցի եւ որքան ստուգեցի յարժանահաւատ անձանց, կալուածք յիշեալ վանից պարունակին ի սահմանս յայսոսիկ՝ ի հիւսիսային կողման Փարախներն, անտի սկսանի դէպ յարեւմուտս ընդ մեծ գետովն մինչեւ ցՆոխուտթուբուլաղն, անտի գնայ դէպ հարաւ ի Տամջլուբուլաղն, եւ անտի գնայ զառ ի վայր մինչեւ ի հին վանքական ջրաղացն, որ գտանի ի ներքոյ ջրաղացն Մոխրենիս գիւղականաց, եւ անտի գայ մինչեւ Ապաշխարողաց անուանեալ աւերակ ջրաղացն եւ այգին, եւ անտի ընդ կատար լերինն գնայ մինչեւ ցմեծ գետն Թաղլարու, որ կոչի Ղօռուչայ»*[15]*: Մեզ է հասել նաեւ Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից 1818 թ. հուլիսի 16-ին կազմված Արցախի առաջնորդական վանքերի մի ուշագրավ ցուցակ, ըստ որի «Դուզաղու Գտիչա վանքին թէմի» մեջ են մտել Տող, Քարագլուխ, Ցոր, Հադրութ, Մոխրենիս, Տու-*

---

[14] Այդ պատմությունների առանձնահատկությունների մասին տե՛ս **Լ. Խաչիկեան,** Հայ միջնադարեան «Վանից պատմութեանց» գնահատման հարցի շուրջ. – «Հայկազեան հայագիտական հանդէս», 1982-1984, հ. Ժ, էջ 9-19, վերահրատարակությունը տե՛ս **Լ. Խաչիկեան,** Աշխատութիւններ, հ. Ա, Երեւան, 1995, էջ 108-114:

[15] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 182, վավ. 449, նաեւ՝ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երեւան, 2001, էջ 253:

մի, Ազոխ եւ այլ, թվով՝ 33 գյուղ[16]: Բերված տեղեկություններից երեւում է, որ Գտչավանքն իր ընդարձակ կալվածքները պահպանել է մինչեւ XIX դարի երկրորդ կեսը: Այնուհետեւ, ինչպես նշում է Հ. Ոսկյանը, այդ կալվածքներն «ամբողջապէս իրմէ յափշտակուած» են[17]: Մասնավորապես, «Արձագանք» շաբաթաթերթի 1886 թ. նոյեմբերի 30-ի համարում հրապարակված մի թղթակցության մեջ կարդում ենք, որ Գտչավանքն «ունի վարելահողեր վէճի տակ արքունի գանձարանի եւ բէկերի հետ»[18]: Կարծում ենք, այս ժամանակաշրջանին է վերաբերվում Մատենադարանում պահվող «Անուանք կալուածոց վանից Ղարաբաղու» վերտառությամբ մի անթվակիր վավերագիր, որտեղ որպես Գտչավանքին պատկանող վարելահողեր նշված են Փարախը, Քոտանոցը եւ Եկեղեցաձորը, որոնք՝ «վասն ծածկեալ լինելոյ վարելահողոցն մացառօք չբերեն զարդիւնս»[19]:

Այս երկից ակնհայտ է դառնում նաեւ Դիզակի մելիքների մշտական հոգատար վերաբերմունքը Գտչավանքի եւ նրա սպասավորների նկատմամբ, ինչն, անտարակույս, Մելիք-Եգանի հաջորդներին էր փոխանցվել իրենց մեծանուն նախնուց: «Հայաստանն այսու եղանակաւ ընդ նմին ժամանակի ծաղկեալ պահէին՝ իւրաքանչիւր գաւառ զվանս իւրեանց. ամենայն անձն ջանայր տալ յիշատակս. եւ մեծամեծ իշխանք եւ որք ունեւորք են եւ հարստացեալք՝ նոցա առաջին հոգս այն էր, զի թողցեն յայսմ աշխարհի զբարի անուն եւ ազնուագոյն յիշատակ» (5ա), – գրում է Առ. Կոստանյանցը: Այս տեղեկությունները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաեւ Արցախի մելիքությունների ներքին կյանքի լուսաբանման համար:

Սակայն, հայտնի է, որ հետագայում՝ XVIII դարի վերջին եւ XIX դարի սկզբին, Շուշիի Իբրահիմ խանի (մահ. 1806) կողմից Մելիք-Եգանյանների տոհմի մի մասը բռնությամբ մահմեդականացվեց, իսկ այդ ճյուղի ներկայացուցիչները սկսեցին կրել Մելիք-Եգանով եւ Մելիք-Ասլանով ազգանունները: Այդ առումով, ուշագրավ է Առ. Կոստանյանցի մի տեղեկությունը Մելիք-Եգանյանների տոհմի մահմեդականացված ճյուղի իր ժամանակակիցների մասին. «Դարձեալ ի դէնս Մահմետի, այնպէս պնդութեամբ պահեն զօրէնս նորա, կարծեմ թէ Մահմետն բնաւին չէ այնու հոգւով պահպանեալ» (6ա): Այս տպավորությունն, անտարակույս, ձեւավորվել է նրանց հետ ունեցած բազմաթիվ շփումների ընթացքում եւ համահունչ է Մելիք-Ասլանովների մասին Լեոյի բերած հայտնի տեղեկությանը. «Կրոնը մոռացնել է տվել հայ մելիքների այդ

[16] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 219, թ. 1:
[17] **Հ. Ոսկեան,** Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 16:
[18] «Արձագանք», 1886, 30 նոյեմբերի, թիւ 44, էջ 578:
[19] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 246, վավ. 459, թ. 2:

հեռավոր ժառանգներին ազգային ամեն մի պարտավորություն: Թեեւ նրանք շատ լավ գիտեն, որ հայեր են, բայց մահմեդական կրոնին պատկանող, այնուամենայնիվ այնքան ենթարկված են ամբոխային հասկացողության, որ կրոնն են համարում ազգության նշան, ուստի եւ ձուլվում են թաթար մահմեդականների հետ՝ հաճախ իրենց ազգակից հայերի դեմ գնալու համար»[20]*: Ահա թե դավանափոխությունն ուր էր հասցրել հայ մելիքների այս շառավիղներին:*

Վերջում նշենք, որ կարեւոր նշանակություն ունեն նաեւ հեղինակի հաղորդած ինքնակենսագրական բնույթի տեղեկությունները, որոնք լույս են սփռում նրա գործունեության նախնական շրջանի վրա: Ըստ այդ տեղեկությունների՝ տասնհինգամյա Առ. Կոստանյանցը, ցանկանալով «մտանել ի կարգ կուսակրօնութեան» եւ նվիրել իր անձը «ի վանս միոյ աւերակի» (6բ), Գտչավանքում սկսել է իր ուսումնառությունը: Եվ հենց միջնադարյան հայ մշակույթի այդ հայտնի կենտրոնն էլ դարձավ այն վանքը, որի հետ ընդմիշտ իր կյանքը կապեց Առ. Կոստանյանցը: Պահպանվել է Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի 1853 թ. սեպտեմբերի 2-ի մի գրությունը՝ ուղղված Դիզակի ազգաբնակչությանը, որով հայտնում է, թե դպիր Առ. Կոստանյանցին կարգել է Գտչավանքի կառավարիչ եւ բարեկարգիչ: «Յանկալով ըստ սեպուհ պարտաւորութեան իմում շէն եւ ապատ առնել զերեւելի վանօրայս թեմիս Ղարապաղու, - գրում է նա, - ամայացեալս յերեսաց զանազան խռովութեանց եւ անհանգստութեանց կողմանցս այսոցիկ, եւ հատատել յիւրաքանչիւրումն ի նոցունց զմիաբանութիւն՝ նշանակեցի այժմէն զդպիր Առաքել Աւագեանն Կոստանեանց ի վանսն սրբոյն Կտիչոյ, զի մնասցէ նա անդր եւ ունիցի ի վերայ վանքապատկան կալուածոցն զկարեւորն նկատողութիւն մինչեւ ցստանալ իմ ի ծայրագոյն Հոգեւոր իշխանութենէ զհրաման ձեռնադրելոյ զնա ի կարգ վարդապետութեան»[21]*: Նույն փաստաթղթից տեղեկանում ենք, որ Առ. Կոստանյանցը կոչված էր նաեւ հայոց լեզու եւ կրոն դասավանդելու տեղի մանուկներին:*

Հարկ է նշել, որ նա իր եւ իր ծնողների մասին որոշ տեղեկություններ էլ թողել է «Պատմութիւն Արցախի» աշխատության առաջին հատորի հիշատակարանում, որտեղ մասնավորապես կարդում ենք. «Ընթերցողք պատմութեանս՝ խնդրէմ յիշել ի խնկանուէր աղօթս ձեր զծնողս իմ Մարիամ եւ զԱւագ, եւ զհոգեւոր ծնողն իմ ճգնազգեաց զՅակոբ վարդապետն, նաեւ զմիաբանութիւնս սրբոյ վանիցն Գտչոյ, որ եւ վասն օգնականութեան նոցա միայնութեանս գործն յաւարտ ընթացաւ: Հուսկ յետոյ եւս աշխատող մատենագրութեանս նու-

[20] **Լեո,** Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Երեւան, 1973, էջ 364:
[21] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 168, վավ. 41:

աստ ծառայիցն Քրիստոսի ծառայ Առաքել վարդապետ միաբան նոյն վանիցն, եւ որք զիս յիշէք ի յաղօթս ձեր, Տէր յիշեսցէ զձեզ յաւուրն այցելութեան»[22]: Նույն ձեռագրում մեկ այլ, ավելի ընդարձակ տեղեկություն էլ Առ. Կոստանյանցը նվիրել է իր մորը՝ Մարիամին: Նկատի ունենալով այդ հիշատակարանի կարեւորությունը, այն բերում ենք ամբողջությամբ. «Արժան է իրաւ յիշել զմայրն իմ Մարիամ, որ քառասուն եւ հինգ ամ այրի նստաւ անարատութեամբ, արդարեւ չկարաց բերան մարդոյ բանալ բնաւին առ նա, զի դնել զբարուրանս ի վերայ նորա: Ի վերջին ժամանակս ի 1853 ամի եկն ի սուրբ վանս Գտիչոյ յօգնութիւն միայնութեանս՝ ծառայեալ ջերմեռանդ սրտիւ եւ սրբամաքուր հոգւով չորեքտասան ամ, եւ ապա՝ մերձեցաւ ժամանակ վախճանման նորա, ուստի լայր եւ ողբայր անմխիթար հոգւով, ասելով՝ որդեա՛կ, զի ահա՛ ժամանակ է մահուան իմոյ, զիա՞րդ կարիցես կեալ միայնակ, ցաւ է ինձ, որդեա՛կ: Վասն որոյ բազում մխիթարական բանս խօսելով խաղաղացաւ ի ծփանացն բազմահոգ, եւ ապա՝ աւանդեալ հոգին՝ թողելով զիս ի մեծի սգաւորութեան եւ տրտմութեան: Ժողովեալ բազմութիւնք արանց եւ կանանց՝ տարեալ ամփոփեցին ի յարեւելեան կողմն արտաքոյ սրբոյ վանիցն Գտչոյ, ի տափարակ ինչ տեղւոջ. ի Տէր. ամէն»[23]: Այստեղից ակներեւ է դառնում, որ Առ. Կոստանյանցն իր հորը կորցրել է վաղ հասակում, իսկ մայրը մահացել է 1867 թ., տասնչորս տարի Գտչավանքում որդու մոտ անցկացնելուց հետո: Առաքել Կոստանյանցը եւս իր մահկանացուն կնքել է այնտեղ եւ թաղվել Գտչավանքի գավթում:

Ամփոփելով՝ նշենք, որ Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Գտչայ վանուց» երկը, չնայած իր առասպելախառն եւ կցկտուր բնույթին, Արցախի պատմության նկատմամբ օրավուր աճող հետաքրքրության պայմաններում կարող է առանձին արժեքավոր տեղեկություններ տալ պատմաբաններին, ուստի որոշեցինք այն հանձնել ընթերցողների դատին:

Հրապարակելով սույն աշխատությունը՝ փակագծերում նշել ենք ձեռագրի էջահամարները, բացել ենք հապավումները, իսկ բաց թողնված տառերը լրացրել ուղղանկյուն փակագծերի մեջ, ինչպես նաեւ անտեսել ենք «ի» նախադիրից առաջ գրված ապաթարցները եւ կետադրությունը սրբագրել ըստ արդի հայերենի կանոնների: Զփոխելով ձեռագրի ուղղագրությունը, տառասխալները նշել ենք սովորականից տարբերվող տառատեսակով: Որոշ դեպքերում, ընթերցողների շահերից ելնելով, միջամտել ենք նաեւ հեղինակի պարբերաբաժանմանը՝ մեծ պարբերությունները տրոհելով ավելի մանր հատվածների:

---

[22] ՄՄ, ձեռ. № 7822, էջ 156բ, տես նաեւ՝ ձեռ. № 7823, էջ 117ա:
[23] Նույն տեղում, էջ 157ա:

ԱՌԱՔԵԼ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ
[ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՏՉԱՅ ՎԱՆՈՒՅ]

(1ա) Յայսմ հատորի պատմագրութեան ցանկամ բովանդակել զայն ամենայն թերութիւնս, որ յետոյ շրջելով ընդ ամենայն անոտնակոխ տեղիս գաւառաց գաւառաց եւ գիւղերէից եւ յանծանօթ վայրս բնակութեան Հայոց կամ այլասեռից ազգաց եւ ազանց. էր, որ տակաւին թարմ եւ ի բերանս ծերունազարդ, ջերմագոյն եւս անձանց արժանահաւատից պատմեն ի լսելիս հնասէր անձանց, եւ էր, որ ի տան ռամիկ եւ անգրագէտ արանց գաղեալ ի կորուստ մատնեն, որպէս թէ նովաւ ունին զնոր իմն զկեանս ստանալ: Արդարեւ թովչութեամբ համոզելով զայնպիսինս, հազիւ հազ կարացեալ հանել ի գաղեալ դարանէ, յայսպիսեաց աստի եւս արտագրեալ զպակասութիւնս անցեալ երկուց հատորոց պատմագրութեանց[24], յորոց մեծ մասն վերաբերելով առ հայրն մեծի մելիք Եկանայ՝ Ղուկաս վարդապետն[25], հայր Մեսրովբ եպիսկոպոսին, որ ամփոփեալ կայ ի վանս Գտչոյ, առ դրան հին Լուսաւորչի եկեղեցւոյն[26], կացեալ ի պաշտօնի հովուապետութեան ի Դիզակ նահանգի՝ ի ՌՃՂԶ. (1747) թուականին Հայոց ըստ հաստատուն վկայութեան (1բ) տապանաքարի նորին, որ գրի, թէ. քսան եւ հինգ ամ կացեալ ի հովուապետութեան, ձեռամբ Մելիք Եկանայ, եւ ապա մեռանի աստ՝ ի սուրբ վանս եւ դնի ի տապանիս: Նաեւ իմ կացեալ աստանօր ի սուրբ վանս Գտչոյ եւ միշտ պարապեալ ի յազգային ինչ պատմագրութեան. սոյն վանից հնական անցս եւ պատահեալ ժամանակաւոր գործողութիւնս այլազգաց, կամ բարեգործութիւնս պայազատազարմ գաւառապետաց եւ Պարսից մեծամեծ թագաւորաց եւ նախարարաց թողեալ մինչեւ յայս յետին ժամանակս՝ մինչեւ ցաւարտումն կենաց մերոց, զի ժամ է արդէն, մինչ կենդանի եմ, սկզբնաւորել թուականիս փրկչական 1884-ին զորքանեաց անցելոց պատահարաց եւ զաստանօր նախկին բնակողաց, թէ ո՞յք են ի նոցունց երեւելի, եւ արարեալ ընդդէմ բնական թշնամեաց մերոց քաջութիւնս՝ թէ՛ Պարսից եւ թէ՛

---

[24] Հեղինակն ի նկատի ունի վերը հիշատակված՝ 1858-1880 թթ. իր գրած «Պատմութիւն Արցախի» երկհատոր աշխատությունը (Մատենադարան, ձեռ. 7822 եւ 7823):

[25] Ըստ տապանագրի՝ Ղուկաս վարդապետը վախճանվել է 1715 թ. (տե՛ս Դիվան, պր. V, էջ 178):

[26] Այս Մեսրոպ վարդապետը, իրոք, պատմական անձնավորություն է եղել: Իսկ վերոնշյալ տողերը գրելիս Առաքել Կոստանյանցը աչքի առաջ է ունեցել Գտչավանքի գավթի հարավային պատի տակ գտնվող նրա շիրմաքարի սույն արձանագրությունը. «Այս է տապան տէր Սիմէօնի որդի Մեսրոպ վարդապետին. թվին ՌՃՀԲ. (1723) լուսահոգի Մելիք Եկանն ձեռնադրել տուավ եպիսկոպոս, կարգեց Կտիչայ վանիցն առաջնորդ. որ եկի հաստատեցի սուրբ աթոռս. ի թվին հայոց ՌՃՂԶ. (1747)-ին առ Աստուած փոխեցաւ. ով որ կարդայ մէկ բերան ողորմի ասեն» (տե՛ս Դիվան, պր. V, էջ 185):

այլասեռից: Տէր տացէ մեզ կարողութիւն գրելոյ եւ վաստակելոյ եւ ի Հոգւոյն Սրբոյ շնորհ պարգեւելոյ, զի մի՛ մնասցէ ի թերութեան եւ ի յանկատարութեան:

(2ա) ԹԷ ՈՎ ՅԱՋՈՐԴԵԱԼ ԶԿՆԻ ՄԵՍՐՈՎԲ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Գրէ այսպէս Յոհան վարդապետ՝ միաբան սրբոյ Աթոռոյս Գտչոյ, ընդ ժամանակի իւրում, թէ զկնի վախճանելոյ Մեսրովբայ ձեռնադրեալ եղեւ որդի նորա Տէր Սիմէօն եպիսկոպոս, ձեռամբ դարձեալ Մելիք Եկանայ[27]: Սա արիաջան աշխատասիրութեամբ լուսաւորէաց մեծ իմն պայծառազարդութեամբ զսուրբ վանս եւ վերստի[ն] իսկ հաստատեաց զմերձակայ կալուածս, զջրաղացս, որ ի ներքոյ Մոխրենիս գեղջ[28], ի վերայ երկուց վտակաց ջրոց, որք խառնին ընդ միմեանց, եւ զայգիս խաղղոյ ի ներքոյ առուաց, որ գնայ եւ ոռոգէ զբոլոր այգէատանս Դող գեղջ բնակչաց: Նաեւ հաստատեաց զտասանորդս քրսան եւ երկուց այգեաց հասարակութեան Դողու գեղջ, ձեռամբ մեծի Մելիք Եկանայ: Դարձեալ սահմանադրեալ վարելահողոց. ներքին սահմանն Ղռուչայ գետն[29] մինչեւ Նոխոդլլուպուլաղն[30] եւ անտի ի վեր՝ մինչեւ եւ իսկ Զըկրռատափ, եւ ի վայր գալով ջրովն ձորակի մինչեւ Մ[ո]խրենիսոյ մեծ յառուն, եւ անտի մինչեւ ի գագաթ Դողու լերինն[31], զայսքանս վերստին առեալ հաստատեաց ի վերայ վանիցս[32]:

---

[27] Այստեղ ժողովրդական հիշողությունը որդու կատարած գործը վերագրել է հորը, այսինքն՝ Մելիք-Եգանյանների տոհմի առավել անվանի ներկայացուցիչ Մելիք-Եգանին: Մինչդեռ, տապանագրերից հայտնի է, որ Մելիք-Եգանը վախճանվել է 1744 թ., իսկ Մեսրոպ վարդապետը՝ 1747-ին: Դա նշանակում է, որ նրա որդի Տեր Սիմեոնը կարող էր եպիսկոպոս ձեռնադրվել Մելիք-Եգանի որդի Մելիք-Եսայու աջակցությամբ, որը Նադիր շահի հրովարտակով Դիզակի մելիք էր նշանակվել 1746 թվականից (տե՛ս **Ֆ. Պողոսյան,** Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, թիվ 1, էջ 204):

[28] Մոխրենիս - գյուղ ԼՂՀ Հադրութի շրջանում, Տողից 4 կմ հարավ: Անցյալ դարում կոչվել է նաեւ Մուխրանես կամ Սուսանլիղ: Եկեղեցին՝ Ս. Սարգիս: Գյուղի մոտ է գտնվում Զովա վանքը (տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան,** Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երեւան, 1998, էջ 712, **Յակոբեան Ա.,** Գտչավանքի շինարարական արձանագրությունը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսության սահմանները. – «Հանդէս ամսօրեայ», 1999, թիւ 1-12, էջ 274):

[29] Ղուրուչայ - գետ Արաքսի ավազանում, կազմվում է Թաղլար եւ Դողա վտակների միախառնվելուց: Հոսում է Իշխանասարի ստորոտով եւ վերին հոսանքում կոչվում է նաեւ Իշխանագետ: Ղուրուչայ է կոչվել ամռանը չորանալու պատճառով (տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան,** նշվ. աշխ., հ. 3, Երեւան, 1991, էջ 594):

[30] Նոխուդլու - գյուղ կա նաեւ Մեծ Հայքի Սյունիք նահանգի Կովսական գավառում (տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան,** նշվ. աշխ., հ. 4, էջ 11):

[31] Տող – լեռ Արցախում, Հադրութի շրջանի Տող գյուղի մոտ: Այս լեռան կատարին է գտնվում Քթիշ ավերակ բերդը:

[32] Գտչավանքի հողային սեփականության վերաբերյալ Առ. Կոստանյանցի տեղեկությունների իսկությունը հաստատվում է իր իսկ կողմից նույն վանքի կալվածքների մասին 1856

Նաեւ մնայ ինձ ասել, որ գնաց առ թագաւորն Պարսից: (2բ) Սոյն սա երանելի արիաջան եպիսկոպոսն Սիմէօն, ձեռամբ մեծի Մելիք Եկանայ, գնայ ի Շահաստան քաղաք՝ առ Պարսից թագաւորն Սիլեհման շահ, որ է Նադիր շահն[33], ընդ իւր ունելով զարձանագիր վանիցս՝ զնախկին հաստատեալ սահմանս կալուածոց, նաեւ բաց ի նմանէ գրելով ի վկայագրի անդ եւ տայ կնքել մեծամեծ իշխանաց Դիզակ նահանգի, զայլ եւ զանազան տեղիս եւ զանուանս կալուածոց եւ սահմանաց՝ աստանօր խաբս արկանէ, ընդ իւր առեալ զայն հաստատագիր, եւ քանի իմն պատուաւոր անձամբք գնայ առ Շահն Սիլեհման: Եւ անդանօր զկնի աւուրց ինչ անցանելոյ՝ մեծ իմն պատուով կոչէ ի սենեակ իւր, առանձանաբար նախ հարցաքննեալ վասն գալստեան նորա, ասելով, թէ՝ ընդէ՞ր յայսքան հեռի ճանապարհս աշխատեալ եկիր ի տեսութիւն մեր: Եպիսկոպոսն յառաջ յուղարկեալ զծանրագին պարգեւս թագաւորութեան արժանի, աստանօր պատասխանէ եպիսկոպոսն, թէ՝ ունիմք մեք ի նախնեաց մերոց սովորութիւն, եթէ նախ չտեսանիմք զերեսս երկրաւոր թագաւորի ընծայիւք եւ պատուօք, զիա՞րդ կարիցէմք հոգւով տեսանել զերեսս երկնաւոր թագաւորին. զի գրեալ է ի գիրս մեր, թէ՝ իշխանութիւն եւ պետութիւնն ո՛չ ուստեքէ է, եթէ ո՛չ յԱստուծոյ[34], վասն որոյ եւ հնազանդէլ պարտեմք նախ մարմնաւորին եւ ապա երկնաւորին:

(3ա) Շահն հաւանեալ բանից նորա, եւ ապա սկսեալ Հայրն Սիմէօն թէ բանիւք եւ թղթով բացեալ զամենայն զիւր խորհուրդս առաջի նորա, ասելով, թէ՝ մեք նախքան զամենայն պարտաւոր եմք միշտ աղօթել վասն յաղթութեանց եւ զօրութեանց թագաւորացն բարէպաշտից գոհացողական բանիւք եւ զանգակահարութեամբ ի մէջ եկեղեցւոյ, զի մնալ անվնաս եւ հաստատուն եւ ձեռամբ երկնառաք անմահ թագաւորին միշտ եւ հանապազ ի մարտի յաղթող գտանիլ, եւ աթոռ իշխանութեան յարատեւեալ յաւիտենական կենօք մնալ յորդւոց յորդիս բազմաժառանգ սէրնդովքն ապագայից. եւ զմեզ պահպանեսցէ խաղաղութեամբ: Եւ ապա սկսեալ զխնդիր իւր ճոխ բանիւք յառաջարկել. նախ բերելով յառաջ զնախկին Պարսից թագաւորս, որք եւ իսկ զբազում բարեգործութիւնս եւ զերախտաւորութիւնս արարեալ են վանորէից եւ կալուածաթղթով հաստատեալ եւ նզովեալ են օրինօք Մահմետի, թէ մի՛ ոք վստահանալ ընդ տիրապետութեամբ իւրով նուաճել զայս եւ զայն սահմանս կալուածոց վանից պար-

թ. դեկտեմբերի 1-ին Ղարաբաղի կոնսիստորիային ուղղված տեղեկագրով (տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 182, վավ. 449, թ. 1):

[33] Նադիր շահի անունը ոչ թե Սուլեյման էր, այլ Թահմազ-Ղուլի խան:

[34] Հմմտ. Կող. Ա, 16:

գեւելոյ ի Պարսից արքայէն, որպէս տեսանի ի կազմեալ մատենի[35] սրբոյն Ստեփէի առաքելոյն ի Սիւնեաց վիճակի[36], եւ ի մատենադարանի սրբոյ Գանձասարայ վանիցն ըստ արտագրելոյ Սարգսի արքեպիսկոպոսի Ջալալեանց եւ տպեալ ի Տփխիս քաղաքի[37]: Այսպէս այլոց ամենայն վանորէից արարեալ բարերարութիւնս եւ թողեալ զիւրեանց ազգացն եւ սերնդոց զյիշատակս երջանկութեան:

Զայս ամենայն արարեալ բարեգործութիւնս թագաւորացն Պարսից յառաջադրելոյ նմա, հանեալ զթուղթն գրեալ պարսից լեզուաւ եւ ետ նմա ընթերցեալ եւ զամենայն գրեալսն ընդ մտօք փակելով, մնաց ի վաղիւն քննել եւ (3բ) տեսանել, թէ ո՞ր գործ է առնելի եւ որն խափանելի: Նոքա արարեալ խորհուրդ ինքեանք եւ դարձեալ առաւօտեան նստեալ յաթոռ դատողութեան, եւ ըստ սովորութեան իւրեանց ժողովեալ յատեան անթիւ բազմութիւնք յամենայն կողմանց արանց եւ կանանց կամ օտարականք, եւ առնէր ուղիղ դատողութիւն. մինչեւ անգամ զարմանալ եպիսկոպոսին, թէ փառք ամենակալին Աստուծոյ, որ եւ իսկ սոքա անհաւատ գոլով օրինօք՝ այսպէսի ուղիղ հոգւով առնեն եւ քննութեամբ դատաստան, եւ էր, որ դնէին արդարութեամբ զմեղս եւ զյանցանս առաջի իւր՝ աւազակն կայր եւ մնայր լռութեամբ իբրեւ արձան քարի կորագլուխ առաջի ատենին, եւ էր, որ եւ հրամայէր ի բանտ արկանել, եւ ոմանք ի վաղ ժամանակաց անտի բանտարկեալ ի տանջանս ի գետնափոր մթին վայրս կացեալ, ոմանց զգլուխն բարձեալ ի մարմնոյն, եւ ոմանց ծայրատելով զմատունսն ձեռաց եւ ոտից եւ զականջսն հատանելով արձակէին, եւ այլ բազում յոլովատեսակ մահապարտութեամբ դատեալ, եւ ամբոխն ցրուեալ անտի, եւ գնացին իւրաքանչիւր ոք ի տունս իւրեանց:

Իբրեւ ժամ եղեւ պարապ իմն դադարման, դարձեալ կոչեցին ի յը[ն]թրիս զսրբազան հայրն Սիմէօն, ըստ օրինի Հայոց պատրաստեալ զկերակուր ամենատեսակ բարելի եւ քաղցրահամ. թէ եւ եպիսկոպոս յոյժ ունէր մաքրութիւն եւ անարատութիւն՝ մինչեւ ցայն ժամանակ բնաւին չէր ձեռնամուխ լիեալ ի կերակուր անօրինաց, սակայն տեղի իրացն պահանջէր՝ յայնպէսի մեծի իմն հանդիսի նախարարաց եւ հազարապետաց, նաեւ առաջի գլխաւորին իւրեանց, զի մի յապաղեսցէ ի յուտելոյ, եւ դնիցէն զբարուրանս ի վերայ նորա, մտօքն խաչակնքեալ զկերակուրսն եւ սկսաւ (4ա) ուտել եւ ըմպել. ի նմին ժամանակի ամենեքեան ի գործ դնէին զգինին, չկայր խտրութիւն պարսից եւ հայոց:

---

[35] Ենթադրում ենք, որ հեղինակն ի նկատի ունի 1781 թ. Տաթեւում կազմված «Պատմագիրք Սիւնեաց» ժողովածուն, որն այժմ 1488 համարի տակ պահվում է Մատենադարանում:

[36] Խոսքը Տաթեւի վանքի մասին է, որը կոչվել է Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեոսի (Տաթեոս) անունով: Ըստ ավանդության՝ վերջինս Քրիստոնեություն է քարոզել Սյունիքում եւ այնտեղ նահատակվել:

[37] Խոսքը **Ս. Ջալալյանցի** «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատության երկրորդ հատորի հավելվածի մասին է (Տփխիս, 1858, էջ 480-501):

ԹԷ ՈՐՔՎ ԲԱՆԻՒ ՎՃԻՌ ԿՏՐԵՑԻՆ ԵՒ ԱՐՁԱՆԱԳԻՐՆ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ, ՈՐ ԱՅԺՄ ԳՏԱՆԻ Ի ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՋԳԻՆ ՄԵԼԻՔ ԵԿԱՆԱՅ, ՈՐ ԴԱՐՁԵԱԼ ԵՆ Ի ԿՐՕՆ ՄԱՀՄԵՏԱԿԱՆԻ Ի ՅԱՒՈՒՐՍ ԻՊՐԱՀԻՄ ԽԱՆԻՆ[38]

Ի թուականին Հայոց ՌՃՀԲ. (1723)[39] *զայն կարգեալ եպիսկոպոսն, որ գնացեալ էր ի տեսութիւն Նադիր շահին, զկնի ճաշակման յաւուրս Զատկի սկսան դնել պայման ի վաղիւն երեքշաբթի ժողովեալ յատեան դատաստանի եւ հանեալ զհին թագաւորաց պատմութիւնս. թէ զի՞նչ իշխանութեամբ եւ որպէսի՞ հոգւով են պահպանեալ զազգս հայոց. նախ զպատմութիւն Մեծին Արշակայ, որ ամս ԾԴ. (54) թագաւորեաց հաշտութեամբ ընդ Հայոց եւ օգնութեամբ միմեանց. եւ ապա Արշական ամս ԼԱ. (31), եւ միւսն Արշակ ամս Լ. (30), Արտաշէս ամս Ի. (20), Արշաւիր ամս ԽԶ. (46): Ի սորա Ի. (20) ամին՝ ծնունդն Քրիստոսի: Արտաշէս ամս ԼԵ. (35): Դարեհ ամս Լ. (30): Արշակ ամս ԺԷ. (17): Արտաշէս ամս Ի. (20): Պերոզ ամս ԼԳ. (33): Վաղարշ ամ[ս] Ժ. (10): Արտաւան ամս ԼԱ. (31)*[40]*: Սոքա ամենեքեան ընդ միմեանց օգնութեամբ Հայոց եւ Պարսից արարեալ են թագաւորութիւն եւ նիզակակից լինելով իրերաց: (4բ) Այսքանեաց թագաւորաց պատմութիւնս կարդալով տեղեկացան, որ միշտ պահպանեալ են զազգս մեր, երբեմն անկեալ հակառակութիւն, երբեմն հաշտութիւն, զի ի հին ժամանակաց անտի կայր առ եպիսկոպոսն կալուածաթուղթ հաստատեալ ի հայասէր թագաւորէն Շահ Ապասայ՝ նա հանեալ եւ եցոյց նոցա. նոքա առաւել եւս կամեցան զամենայն սահմանս վանիցն հաստատել: Իւրեանց օրինօքն կարգեցին եւ գրեցին եւ կնքահարեալ ի վերայ մաքաղաթ թղթոյ. եւ ամենայն մեծամեծք նոյնպէս կարգաւ հաստատեալ ետուն Սիմէօնի եպիսկոպոսին: Նաեւ այլ ինչ թանկագին ընծայս եւ ծանրագին պարգեւս: Նաեւ պատուելով թագաւորն Պարսից զեպիսկոպոսն մեր, դնելով ընդ նմա երեսուն հեծեալս՝ բերել ի սահմանաց իւրեանց անցուցանել՝ թերեւս անվնաս գալ հասանիլ ի գաւառս եւ ի վանս մեր Գտչոյ:*

Ըստ հրեշտակի խաղաղութեան եւ առաջնորդութեան եկեալ եւ հասեալ ի վանս, եւ ժողովեալ յամենայն կողմանց բեկազնեայք եւ կառավարիչք գիւղա-

---

[38] Խոսքը Մելիք-Եգանյանների տոհմի մահմեդականացված ճյուղի շառավիղների մասին է (նրանց մահմեդականացման մասին տե՛ս **Ա.Ռ. Կոստանեանց,** Դիզակի մելիքությունը, էջ 81-82):

[39] Այստեղ հեղինակն ակնհայտորեն շփոթում է թվականը: Այդ հանդիպումը կարող էր տեղի ունենալ 1747 թ. սկզբին, քանի որ նույն թվականի հունիսին Նադիր շահը Խորասանում դավադրաբար սպանվեց իր մերձավորների ձեռքով (այդ մասին տե՛ս **Ñ. Êèøèí èøåâ,** Ï îõîäû Íàäèð-øàõà â Ãåðàò, Êàçàíäàðò, Èíäèÿ è ñîáûòèÿ â Ï åðñèè ïîñëå åãî ñìåðòè, Òèô ëèñ, 1889, ñ. 216-217):

[40] Սույն արքայացանկը հանգում է Մովսես Խորենացուն:

կանաց, եւ գործակատարք եւ հոգեւորականք՝ տեսանել արդեօք զի՞նչ գործ եւ զի՞նչ սահմանս են հաստատեալ վասն լուսաւորութեան սրբոյ վանիցս մերոյ: Եպիսկոպոսն հանեալ զթուղթն երկու կանգուն երկարութիւնն եւ լայնութիւնն նոյնչափ հաստատեալ ամենայն զգուշութեամբ, զի մի՛ ոք վստահանալ ձեռնամխեսցէ: (5ա) Ի կալուածս վանքական կրկին հաստատեցին մեծամեծ բեկազնեայք, իւրաքանչիւր ոք ըստ արժանաւոր ընդունակութեան իւրոյ ընծայեցին այգիս եւ վարելահողս, ջրաղացս, պղնծեղէնս, մահիճս, եւ զպատկանեալ վանիցս կահուկարասիս, նաեւ՝ ոմն զձի եւ եզն եւ ոմն զկով, զի այնպէս եղեւ մինչեւ անգամ աղքատքս եւս ըստ չափոյ կարողութեան իւրեանց պարգեւս ետուն: Թո՛ղ զզարդս վանիցն, զի այսու եղանակաւ վերստին ճոխացուցին եւ զարդարեցին, եւ հաւաքեալ զմիաբանս երկուտասան. վասն որոյ բազմացան ծառայք եւ խոհարարք, նաեւ լուսարարս եւ ժամահարս, ընդ նմին զամենայն գաւառային հոգեբաժինս եւ զաթոռահասս եւ անյիշատակ արանց եւ կանանց տան կահուկարասիս, հանգուցեալ քահանայից կողոպուտսն, զայս ամենայն ընդ այն ժամանակս բերէին ի վանս. ո՛չ միայ[ն] յայս մերս՝ այլեւ յամենայն վանորայս: Հայաստանն այսու եղանակաւ ընդ նմին ժամանակի ծաղկեալ պահէին՝ իւրաքանչիւր գաւառ զվանս իւրեանց. ամենայն անձն ջանայր տալ յիշատակս. եւ մեծամեծ իշխանք եւ որք ունեւորք են եւ հարստացեալք՝ նոցա առաջին հոգս այն էր, զի թողցեն յայսմ աշխարհի զբարի անուն եւ ազնուագոյն յիշատակ. արդարեւ երանական կեանս ունէին:

(5բ) Սոյն սա Սիմէօն եպիսկոպոսս վարելով զհովւապետական կեանս Իե. (25) ամ՝ կնքէ զցանկալի կեանս, թողելով զիշխանութիւն վանիցս Յոհան վարդապետի: Թէեւ յառաջ քան զնոսա նստեալ են բազում եպիսկոպոսք, բայց նոցա վարուցն չունիմ կատարեալ տեղեկութիւն[41]*: Վասն զի կառուցեալ է վանս*

[41] Մեզ հաջողվել է ճշտել XVI-XVII դդ. Գտչավանքի մի քանի եպիսկոպոսների անունները: Ստորև հրատարակում ենք Մատենադարանում 6834 թվահամարի տակ պահվող Մաշտոցի հիշատակարանը, ըստ որի 1575 թ. Գտչավանքի վանահայրը Գալոս եպիսկոպոսն էր. «Քրիստոս Աստուա՛ծ մեր, քո սուրբ ծնընդեամբդ եւ յայտնութեամբդ, եւ մկրտութեամբդ, թաղմամբդ եւ յարութեամբդ ողորմա՛ ըստացողի գրոյս Բէկու, եւ իւր ննջեցելոցն, եւ գծողիս՝ Պետրոս անուամբ աբեղայի, եւ ծնողաց իմոց՝ հաւրն իմոյ Մոմուն, եւ մաւր իմ Թէզային, եւ եղբարց իմոց եւ քվեռաց իմոց. եւ ամենայն յարեան մեռոց կենդանեաց եւ հանգուցելոց, ով որ կարդամ կամ աւրինակամ, Աստուած ողորմի ասէ՛ լի բերանով. ամէն: Փառք Ամենայսուրբ Երրորդութեան եւ մի աստուածութեան՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ, որ ետ կարողութիւն տկարիս եւ փծուն անիմաստիս հասանել ի աւարտ եւ ի կատարումն գծիս: Արդ, անկեալ սուրբ տաս, որ կոչի Մաշտոց, գրեցաւ ձեռամբ անիմաստ եւ անարուեստ գծողի՝ Պետրոսի սուտանուն կրաւնաւորի, յանուամբ միայն աբեղայի, ի դառն եւ ի չար ժամանակի, ի թիւականութեան հայոց ՌԻԴ. (1575). ի ղանութեան Շահ Թահմասպին, ի երկիրս Դիզակ, ի գեղս Պատկայքաղ, ի վանքս Քթիշու Սուրբ Աստուածածնիս եւ ամենայն սրբոցս. եւ եպիսկոպոսութեան տեղոյս տէր Գալոս եպիսկոպոսի: Եւ երեսս անկեալ աղաչեմ զսուրբ ընթերցողսդ Աստուածաշունչ կտակիս՝ յիշեցէ՛ք ըստացող*

ի գալստեան ազգին թաթարաց. ի թուականին Հայոց ՈՂ. (1241)[42], անտի մինչեւ ցսոյն անցեալ թիւն ՌՃՀԲ. (1723) շարունակ նստեալ են վիճակաւոր եպիսկոպոսք: Թողելով զնախկին առաջնորդաց մասնաւոր տեղեկութիւնս յայլում տեղւոջ, անցեալ թուականիս տեղեկութիւնս որչափ յայտնի է՝ զայն պատմեցուք:

ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՅ ԵՒ ԲԱՐՈՒՅ ՎԱՆԱՀՕՐ ՎԱՆԻՅՆ ԳՏՁՈՅ ՅՕՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀՄՈՒՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի ժամանակս սորա սակաւ[ա]թիւ էր միաբանութիւնն եւ բազումք ցրուեցան ի վանորայս, եւ սկսաւ նուազիլ, բայց տակաւին աղբիւրք արդեանց ճոխ եւ առատք էին, բայց պահպանելն յառաջ է եւ քաղցրաբանութիւնն, նաեւ սիրայորդոր խօսելն եւ մխիթարութեամբ սիրելն, քան զկերակուրս եւ ըմպելին:

(6ա) Ի սորա ժամանակին տակաւին կենդանի էր Մալիք Եսային՝ որդի Մելիք Եկանին, ունէին բարեկամութիւն ընդ միմեանց: Երեք ամ չանցեալ սպանին Մելիք Եսային[43]. վանքն աստանօր տկարանայ եւ սկսեալ նուազի օր ըստ օրէ: Յետ այսորիկ անկանի սով սաստիկ յերկիրս Աղուանից[44]. այնուհետեւ

զաստուածասէր եւ հաւատարիմ զԲէկին, որ ըստացաւ զսուրբ տաս ի հալալ արդեանց եւ ետ գրել յիշատակ իւր եւ բարի ծնողաց իւր՝ հաւն իւրոյ Համզայի եւ մաւն Խոնարհայ, եւ Թանասայ, եւ Առուսայ, եւ Վարդումայ, եւ իւր որդոցն՝ Յոհանէսին, Ադայճանին եւ Աթամին եւ դու[ս]տր իւր Շահումին, Խանումին, եւ Տաւտին, եւ յարեան մեռնաւորաց՝ կենդանեաց եւ մեռելոց. Քրիստոս Աստուած քաղցր ակամբ հայեսցի ի տառապեալս, եւ լսել տացէ զնայնն երանական բարբառն, որ ասէ՝ եկա՛յք աւ[ր]հ[ն]եալք Հաւր իմոյ, ժառ[ան]գեցէ՛ք զպատրաստեալ [արք]աւթիւնն Աստուծոյ, յափտեանս...» (էջ 187բ-189ա):

Իսկ ըստ Ղ. Ալիշանի՝ Գտչավանքի միաբան է եղել նաեւ 1653-1675 թթ. Աղվանից կաթողիկոս Պետրոս Խանձթեցու եղբայր Մատթեոս քահանան, որի համար 1668 թ. Ավետարան է ընդօրինակվել (տե՛ս **Ղ. Ալիշան,** Սիսական, Վենետիկ, 1893, էջ 270):

[42] Այստեղ հեղինակն աչքի առաջ է ունեցել Գտչավանքի շինարարական արձանագրության հետեւյալ տողերը. «Յանուն Աստուծոյ, Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, ես՝ Տէր Սարգիս եւ Տէր Վրթանէս, Ամարասա իպիսկոպոսք, հիմնեցաք զեկեղեցիս ի թվիս ՈՂ (1241)...» (տե՛ս **Ա. Յակոբեան,** նշվ. աշխ., էջ 260, հմմտ. Դիվան, պր. V, էջ 182):

Գավթին կից կա մի կիսափոլ եկեղեցի, որը կառուցվել է ավելի վաղ: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ VIII դ. սկզբին տեղի ունեցած Պարտավի եկեղեցական ժողովին մասնակցել է նաեւ «Գտայ վանաց տանուտէրը» (տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, բնական բնագիրը եւ ներածությունը՝ *Վ. Առաքելյանի*, Երեւան, 1983, էջ 300, **Ա. Հակոբյան,** Եղիա Արճիշեցի կաթողիկոսի նորահայտ թուղթը. – «Պատմաբանասիրական հանդես», 1981, № 4, էջ 150):

[43] Մելիք-Եսային սպանվել է 1781 թ., Շուշիի Իբրահիմ խանի կողմից (տե՛ս Դիվան, V, Արցախ, էջ 179, նաեւ՝ **Բաֆֆի,** Խամսայի մելիքությունները, հ. 9, էջ 469): Մատենադարանում 3881 թվահամարի տակ պահվող Առաքել Կոստանյանցի պատմական նյութերի մեկ այլ ժողովածուում կարդում ենք. «Ի 1230. (1781) թուին Դողու Մալիք Սային սպանեցին» (էջ 86բ):

[44] Խոսքը Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքներից հետո 1797-1798 թթ. Արցախում բռնկված սովի եւ մահտարաժամի մասին է (այդ մասին տե՛ս **Յովհան Ոս-**

չմնայ մարդ եւ բնակութիւն ցանուցիր լինին, որպէս պատմեալ եմ յառաջին հատորի պատմագրութեանս զամենայն տեսակս կոտորման[45]*: Ընդ այն ժամանակս սկսի առաւել եւս նուազիլ վանքն յամենատեսակ կառավարութենէ, մինչեւ անգամ կերին զամենայն անասունս թէ սուրբ եւ թէ անսուրբ. մնաց մի հատ եզն, մնացեալսն ծախսս արարին. մասնաւոր ինչ մնաց ի ձեռս վանահօրն՝ նա բարձաւ ի վերայ եզին եւ գնաց թէ յո՞ր, ոչ ոք գիտէ զտեղին:*

Այնուհետեւ բոլոր գրեանքն եւ կալուածաթուղթքն անկանին ի ձեռս ազգին Մելիք Եկանայ, անտի մինչեւ ցայսօր կայ եւ մնայ անդ[46]*. քանիցս անգամ խնդրեցի՝ ո՛չ ետուն, վասն զի չեն հաւատակից այժմ. դարձեալ ի դէնս Մահմետի, այնպէս պնդութեամբ պահեն զօրէնս նորա, կարծեմ թէ Մահմետն բնաւին չէ այնու հոգւով պահպանեալ*[47]*, որպէս նոքա կամին զոհել զիրարս եւ զորդիս իւրեանց:*

Դարձուք ի կարգ բանից մերոց: Բարձաւ միաբանութիւնն միանգամայն եւ մնաց անասնաբնակ, այնուհետեւ պահէին ի նմա խոզս եւ զայլ անասունս, ածեալ ի մէջ տաճարին եւ պահպանողքն ի դրան տաճարին ննջէին եւ ես իս-

---

կերչեան, Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար. – «Կռունկ Հայոց աշխարհին», 1862, թիւ Դ, էջ 287-288, Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), աշխ.՝ *Ռ. Տիտանյանի*, Երեւան, 1981, էջ 103):

[45] Հեղինակն ի նկատի ունի իր «Պատմութիւն Արցախի» աշխատության առաջին հատորի «Յաղագս սովուն, որ եղեւ յերկրին Արցախու զկնի Աղամահմատ խանին» եւ «Յաղագս ժանտախտ բորոտութեան» գլուխները (տե՛ս ՄՄ, ձեռ. № 7822, էջ 102բ-109ա):

[46] Այս տեղեկության իսկությունը հաստատվում է Առ. Կոստանյանցի կողմից 1856 թ. դեկտեմբերի 1-ին Ղարաբաղի կոնսիստորիային ուղղված մեզ նախածանոթ տեղեկագրով, որտեղ մասնավորապես կարդում ենք. «Որպէս յայտնեն ինձ հասարակութիւնն Հայոց Տող գեղջ, վասն վերոյիշեալ կալուածոց եւ սահմանաց, որպէս եւ այլոց իսկ կալուածոց յիշեալ վանիցն, գտանի կալուածաթուղթ առ Փարհատ բէկին՝ որդւոյ Մելիք Ասլանին, բնակչի Տող գեղջ» (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 182, վավ. 449, թ. 1բ):

[47] Մելիք-Եգանյանների տոհմի մահմեդականացված ճյուղի շառավիղների մասին Լեոն գրում է. «Այդ մահմեդականացած հայերն այժմ Տող գյուղի բեկերն են եւ կրում են Մելիք-Ասլանով եւ Մելիք-Եգանով հայկական ազգանունները: Բայց կրոնը մոռացել է տվել հայ մելիքների այդ հեռավոր ժառանգներին ազգային ամեն մի պարտավորություն: Թեեւ նրանք շատ լավ գիտեն, որ հայեր են, բայց մահմեդական կրոնին պատկանող, այնուամենայնիվ այնքան ենթարկված են անբոխային հասկացողության, որ կրոնն են համարում ազգության նշան, ուստի եւ ձուլվում են թաթար մահմեդականների հետ՝ հաճախ իրենց ազգակից հայերի դեմ գնալու համար: 1904-1906 թվականների հայ թուրքական ընդհարումների ժամանակ այդ Մելիք-Ասլանովներից մեկը, որ պրիստավի պաշտոն էր կատարում Զանգեզուրի գավառում, անորակելի գազանություններ կատարեց հայերի նկատմամբ: Բարձրագույն ուսումն էլ չի կարողանում ազգության մասին ուղիղ գաղափար տալ Տողի երբեմնի հավատուրացների այժմյան սերնդին: Նույն Մելիք-Ասլանովներից մեկը, կրթությամբ ինժեներ, մինիստր էր 1918 թվին Ադրբեջանի մուսավաթական կառավարության մեջ, երբ Բաքվում, այդ կառավարության կարգադրությամբ, կոտորեցին մոտ 30 հազար հայեր» (տե՛ս **Լեո,** Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 364):

կութեամբ ականատես եմ այսմ անկարգութեան:

(6բ) Մնաց այն պայծառազարդ տաճարն աւերակ մինչեւ ՅՂ (390) ամ. ի յետին ժամանակս եկի ի տեսութիւն սրբոյ տաճարին, տեսին զիս արք այնոքիկ, որք պահէին զկովս եւ հաւաքել զկիթս եւ միւս տաւարեղէնս. այնքան աղբ են կուտակեալ՝ միոյ մարդաչափ, ի նմին ժամանակի էի 15 ամաց. եւ նոր ուսանէի զեղանակ ժամասացութեան: Սակայն ուխտադիր էի մտանել ի կարգ կուսակրօնութեան, բայց զուրկ եւ դատարկ էի ի գիտութենէ Սուրբ Գրոց, կամ ի շարադրութենէ քերականական շարուածոց: Ի մտի եդի, եթէ ըստ կարօտութեան իմոյ սուրբ Տիրամայրն մասնաւոր տացէ զկաթ շնորհաց՝ իմն բանից գիտութեան. ընդունիմ զաստիճան կուսակրօնութեան. տամ զանձն իմ ի վանս միոյ աւերակի[48]: Թերեւս իմոյ անձին օգնականութեամբ եւ ամենակալին յաղթող զօրութեամբն եղից պատճառ լուսաւորութեան, զի այս բան կարի իմն երկարագոյն ձգի, թէ յորքան տեղիս եւ ի վանորայս եմ շրջեալ, զիմ կենսագրութիւնն ունիմ առանձնակի պատմաբանել[49]:

Դարձուք ի կարգ ճառագրութեան մերոյ: Նոյն վանսն մնաց յայնպիսի խաւարային տխրութեան. ո՛ ոք մտանէր ի տաճարն, արտասուաթոր ելանէր, որպէս այր մի կիսամահ անկեալ ի ճանապարհի ակնարկէր այնպիսի ուրուք, որ կարող իցէ բուռն հարել զնմանէ եւ յարուցանել: Առ այս արժան է պատմել, զի շրջան ժամանակին քաղցրութեամբ բերի առ վիպասանութիւնն՝ եթէ կարող իցէ համառօտ զճառն զարդարել՝ ո՛չ ծաղկօք, այլ պտղօք:

(7ա) Ի ԹՈՒԱԿԱՆԻՍ ՊԼԲ. (1383) ԵԼ ԹԱՄՈՒՐԼԱՆԿՆ Ի ՍԸՄՐՂԱՆԴ ՔԱՂԱՔԷ, ԼՅԵԱԼ ԱՄԵՆԱՏԵՍԱԿ ՁԱՐՈՒԹԵԱՄԲ. ՁՍՈՐԱ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ Ի ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ ՅԱՋԳԱՅԻՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆՄ[50] ԳՐԵԱԼ ԿԱՅ, ԲԱՅՑ ՁԹՈՒԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ ՅԱՅՏՆԵԼ ԿԱՄԻՄ

Սա իբրեւ զկատաղեալ չարագոյն գազան պատառող արձակէ ի վերայ աշխարհիս, վեր ի վայր տապալէր զամենայն գաւառս եւ գիւղէրայս եւ զամրագոյն դղեակս եւ բերդորայս:

---

[48] Առ. Կոստանյանցին հաջողվել է իրականացնել իր մտադրությունը: Նա Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար արհեպս. Հասան-Ջալալյանի կողմից 1853 թ. սեպտեմբերի 2-ին կարգվել է Գտչավանքի վանահայր եւ իր գործունեությամբ մեծապես նպաստել հայ մշակույթի այդ հայտնի կենտրոնի շենացմանը (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 168, վավ. 41):

[49] Առ. Կոստանյանցն ի նկատի ունի իր այն ժողովածուն, որն այժմ 3881 թվահամարի տակ պահվում է Մատենադարանում (էջ 91ա եւ հտ.):

[50] Հեղինակն ի նկատի ունի իր «Պատմութիւն Արցախի» աշխատության երկրորդ հատորի «Յետ այնորիկ երեւեցաւ Թամուրլանկն» սկզբնատողով սկսվող գլուխը (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7823, էջ 11ա-22բ):

Ի սմին վերոյ գրեալ ՊԼԲ. (1383)[51] թուականիս, թէ հացն սղեալ ի մարախահարութենէ ներքին կողմն Պարսից տէրութեան, Արտավուլ կոչեցեալ քաղաքի սահմանսն՝ ունի գաւառ մի, որոյ անունն կոչի Շաղախ. ի սաստկանալ սովուն[52] ի նահանգէ աստի հաւաքեալ եւ ժողովեալ խորհուրդ արարին կապեալ եւ կազմեալ կարաւանս յուղի անկեալ գան ուղղակի ի յարմար ժամանակի գարնանային յԱմարէն ինչ քաղաք, որ է Ամարաս, ի կալուածս սրբոյն Գրիգորիսի[53]: Իջեւանեալ անդ առընթէր քաղաքին եւ մտեալ ի ներքս բնակութեան՝ մուրանալով հայթայթեն ապրուստ կերակրոյ: Սակայն ի նմին ժամանակի վանքն Գրիգորիսի մերձ լինելով քաղաքէն վասն ահի եւ երկիւղի թշնամեաց, այր մի յազգէն մահմետական Դաութ անուն ի նմին կարաւանի, որոյ ունէր որդի մի երկուտասանամեայ, որ գաղտ անկեալ զկնի իւրեանց եկեալ էր յորդորանօք մօրն իւրոյ, թերեւս մայրն իցէ ի քաղաքէն յայնմանէ եւ զաւակ քրիստոնէի եւ նա բանս եդեալ ի բերան որդւոյն, զի մի՛ անդրէն (7բ) դառնալ յերկիրն եւ ի բնակութիւն իւրեանց եւ մի՛ մնալ ի դէն մահմետականի: Զի կինն ուխտեալ էր յառաջան քան ծնուիլն, եթէ չկարիցեմ գնալ եւ գտանել զկորուսեալ հաւատս, թէրեւս Արարիչն ընկալցի յաչացս իմ արտասուս ի զաւակացս զառաջին ծնունդն հնարիւք իմն կարիցեմ գոնեա՞յ ի կրօնս հայրենի հաւատոյս իմոյ դարձուցանել. այսու բանիւ յորդորեալ էր եւ յուղարկեալ:

Դարձուք ի կարգս մեր: Մարդիկ կարաւանի յոյժ բազմաթիւ՝ ընդ առաւօտն յարուցեալ մտին ի քաղաքն որոնել եւ գտանել զցորեան գնելոյ. կայր այր մի մեծանուն, որոյ անուն կոչի Ադծայ. նա խոստացաւ ամենեցունց լրացուցանել միայնակ ինքն՝ զբեռնիս ցորենոյ նոցա, որպէս խոստացաւ, այնպէս կատարեաց: Մնացին անդ յերիս աւուրս: Մանուկն Անտոն[54], որ զկնի աւագանին մկրտութեան կոչեցաւ Անտոն-Ուսուփ էր նախնական անունն. նա գնայր յամենայն աւուրս ի սուրբ վանս Գրիգորիս, նկատէր սուրբ պատարագին եւ ամենայն արարողութեանց ժամերգութեան. ընդ նմին ժամանակի յոյժ գեղ[եց]կագոյն էր շինուածս տաճարին եւ պատկերազարդ. մանկանն ուշ անկաւ եւ ծագեցաւ ի կրօնապաշտութիւնս մեր՝ խօսէր եւ հարցանէր զհաւատոյ բանս

[51] Լենկ Թեմուրը առաջին անգամ Հայաստան է արշավել 1386 թ. գարնանը:

[52] Լենկ Թեմուրի առաջին արշավանքի հետեւանքով անբերրիություն եւ սաստիկ սով է եղել 1388 թ. (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երեւան, 1972, էջ 27):

[53] Ամարաս - գյուղաքաղաք Մեծ Հայքի Արցախ նահանգի Մյուս Հաբանդ գավառում: IV դ. սկզբին Գրիգոր Լուսավորիչն այստեղ հիմնել է Ամարասի վանքը, որի կառուցումն ավարտել է նրա թոռ Գրիգորիս եպիսկոպոսը: V դ. սկզբին Մեսրոպ Մաշտոցն Ամարասում բացել է Արցախի առաջին դպրոցը: Վաղ միջնադարում հայկական մշակույթի կարեւոր կենտրոն էր:

[54] Սույն անունը հեղինակի ձեռագրում հանդիպում է նաեւ Անտօն ձեւով: Միակերպության համար պահում ենք Անտոն ձեւը:

առանց յայտնելոյ զներքին խորհուրդս իւր, սակայն նշմարէր եւ ստէպ ստէպ գնայր եւ գայր տեսանիլ՝ արդեօ՞ք չուեալ են մարդիկ կարաւանի, թէ դեռ անդ կան: Քանզի յոյժ ջերմացեալ եւ սէր կաթոգին վառեալ առ հաւատս քրիստոնէից, բայց չկարէր (8ա) տակաւին ի յայտ անել, վասն որոյ գնաց յուզելով եւ որոնելով զտեղի մի գտեալ թագոյց զինքն յայնպիսի ամրագոյն ինչ խրամս դաշ[տ]ափոր եմուտ անդ անդ, որ չէ հնար պատահել մարդոյ տեղւոյն այնմիկ, կացեալ անդանօր յաւուրս երիս, բայց յերեկոյեան ժամուն գայր ի միաբանէ յումեմնէ, տանէր զմասնաւոր զուտելիս, այնքան՝ պահել զկեանս կենդանի մինչեւ անցցէ տարակուսանք սրտի իւրոյ: Գնալ հայրն՝ թերեւս բարեյաջողութեամբ զկամս իւր կատարեսցէ: Իբրեւ չուեալ գնացին կարաւանն եւ ամենայն մարդիկ, մանկան հայրն թագեալ անդանօր ի բնակութեան եւ ի գաւթի ուրումն իշխանի անձին միոյ, թէ կարիցէ ծածկաբար հարցման գտանել, բայց որդի նորա քան զնա փութով էր գիտացեալ. ոչ կամեցաւ երբէք անտի ելանել մինչեւ հրաժարեալ գնասցէ իւր հայրն, զոր ինչ կատարեցաւ: Գնաց հայրն՝ չկարաց գտանել: Մանուկն իբրեւ ետես ընդարձակութիւն կենացն, եթէ ի կասկածանաց երկիւղէ ազատեցաւ անձն իւր, նախ նստեալ մտածէր յետագայ վիճակ գալոյ յիւր վերայ՝ կենացն, թէ արդեօ՞ք կարիցեմ զմօրն իմոյ դաշնադրութիւնս յաւարտ ածել: Գնալով՝ գնացից առ միաբանս վանիցն, կամ առ վանահայր նոցա՝ յայտնել զցաւս եւ զներքին խորհուրդս, թերեւս զերծանելոյ զիս հնարս գտանել եւ զանհանգիստ խիղճս իմ դադարացուցանել, վասն որոյ յարուցեալ տրտմութեամբ գնաց ի վանս Ամարասայ, սակայն ոմանք ճանաչէին, որ յառաջ քանիցս անգամ գնացեալ էր ի մէջ նոցա եւ ի տեսութիւն տաճարին:

(8բ) ՅԱՂԱԳՍ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԻՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՅ ՄԱՆԿԱՆՆ

Իբրեւ եմուտ ի վանս, պատահեալ վարդապետի միոյ եւ նստեալ ընդ նմա՝ խոստովանաբար սկսեալ պատմեաց զամենայն խորհուրդս իւր: Իբրեւ լուաւ վարդապետն, յարուցեալ գնաց առ երջանիկ սուրբ Ստեփաննոս հայրապետն, զբանս եւ զգործս յայտնեաց նմա: Եւ վաղվաղակի նա հրամայեաց ածել առ ինքն, եւ նա եկեալ՝ զաջս նորա խոնարհեալ երկրպագութեամբ համբուրէր: Խոնարհաշունչ սուրբ հայրապետն նստոյց առընթեր իւր, երկայնմտութեամբ լսելով զբանս նորա հարցանէր. եւ նա մօրն քրիստոնեայ լինելն եւ ի գերի վարելն եւ նորա արարեալ զուխտադրութիւնն եւ թագչիլն իւր ի հօրէ իւրմէ. եւ յօժարութիւնն իւր ընդունել զհաւատս մեր՝ զամենայն կարօտութիւնս լցուցանել թերեւս: Իբրեւ ծանոյց զջերմեռանդութիւնս իւր. եւ ապա հայցէր ըստ սովորութեան օրինաց մերոց մկրտել եւ ուսուցանել զկրօնապաշտութիւնս հայոց: Սուրբ հայրապետն կամէր ըստ կանոնաց նախահարցն նկատել եւ ընդ փորձութեամբ անցուցանել եւ զհամբերութիւն նորա տեսանել, զվարս եւ բարս նորա

քննել, զյետագայիցն տեսանել եւ այլ պատահմունս ծագեսցէ յետին գործողութիւնն չարագոյն լինիցի քան զառաջինն փութանակի ուխտակատարութիւնն: Առ բան հայրապետին միաբանք սուրբ վանիցն չկամեցան ընդունել, թէ տակաւին մանուկ է, գուցէ միտք նորա փոփոխեսցէ յայլ իմն էութեան. թոյլ տո՛ք երախայացուցանել արդէն եւ ի տալ ձեռս նորա զտառս հայոց եւ ուսուցանել զգիրս եւ զհաւատոյ բանս եւ կրթել ի կրօնապաշտութեան: (9ա) Ընդ յայսմ բանի միաբանաց համոզեալ սուրբ հայրապետն առ ի կատարել ի վաղիւ անդր. ընդ առաւօտն սկսան պաշտօն մատուցանել հանդերձ զանկագահարութեամբ առ ի ժողովել զբոլոր իշխանս եւ ժողովրդականս[55]. սկիզբն արարին կատարել զխորհուրդ մկրտութեան մինչեւ ցվերջ պատարագին եւ ապա հաղորդեցին ի կենարար մարմնոյ Տեառն եւ յարենէ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Զլիակատար պատմութիւն սորին գրեալ եմ յերկրորդ հատորի պատմագրութեանս իմում[56]. անդանօր սխալեալ եմ՝ գրեալ զանուն մանկանս Գրիգոր[57], ո՛չ այլ թէ Անտոն:

Նպատակ մտացս այն է համառօտ գրել, զի զնախկին գրեալսն վերստին աստանօր զնորոգել: Ի վերջոյ այս Անտոն մանուկ այնքան մտօք լուսաւորէր, մինչեւ անգամ ընթացս եօթն ամաց կրթեալ յամենատեսակ գիտութիւնս ներքին եւ արտաքին գրեանց Հայոց լեզուի: Զանուն սորա մինչեւ անգամ հռչակեալ յայտնեցին ընդ ամենայն տեղիս՝ ի քաղաքս, ի գաւառս եւ ի գիւղս: Համբաւ սորա անկաւ յերկիրն իւրեանց. եւ լուաւ հայր նորա: Կամէր գալ եւ առնուլ զորդին իւր եւ տանել, սակայն կինն արգելուր, թէ փառք Աստուծոյ, ունիմք հինկ որդեակս արու՝ թոյլ տո՛ւք գնալ ի ճանապարհս Աստուծոյ մերոյ, բայց նա երբեմն դադարէր եւ երբեմն շարժէր զգութ ծնողական. չկարաց գտանել հանգիստ մտացն՝ ուստի յարուցէ յաւուր միում կազմեալ (9բ) զերիվարն, եւ առեալ զզէնս իւր կամէր գնալ. կինն գիտէր զվարս նորա եւ զքաջութիւն նորա, թէ կամ պարտ է բերել, կամ սպանանել, վասն որոյ ասաց, եթէ չկարիցես բերել՝ միայն զմի նշան յորդւոյ իմմէ ընդ քեզ բերել: Բայց այրն նորա յոյժ սիրեր զկին իւր, վասն զի չէր հաւատակից ընդ նմա. ուստի ի յուղի անկանելն զամենայն ինչս իւր կնոջն աւանդեաց. թէ ահա՛ ես գնամ, դու գիտես այդ տուն եւ ամենայն շարժական եւ անշարժականք, զոր ինչ կամիս, կարող ես առնել. թերեւս անդ անտանելի ցաւոց եւ մահու պատահիցեմ, չկարիցեմ վերադառնալ

[55] Ձեռագրում նախապես գրված է եղել իշխանք եւ ժողովրդականք:

[56] Հեղինակն այս մասին գրել է «Պատմութիւն Արցախի» աշխատության ոչ թե երկրորդ, այլ առաջին հատորում՝ «Յաղագս սրբոյն հրաշագործ նահատակին Շախկախու» անվանումը կրող գլխում (տե՛ս ՄՄ, ձեռ. 7822, էջ 18բ-23ա):

[57] Այնտեղ Ա.Ռ. Կոստանյանցը գրում է, որ վանահայրը «հրամայեաց միաբանացն երախայացուցանել զմանուկն. եւ կոչել զանուն նորա Գրիգոր ըստ անուանն Գրիգորոսի կաթուղիկոսին. միաբանքն ըստ հրամանին կատարեցին մեծ հանդիսաւոր մկրտութիւն նորա» (տե՛ս նույն տեղում, էջ 19բ):

ի տեսութիւն ձեր եւ մանկանցս: Վասն որոյ կին նորա քաջալերեաց, թէ մի՛ երկնչիր, միայն զբարիս գործեա՛ վասն մանկանն: Այրն ըստ ծնողական գթոյն շարժման մտրակեալ զերիվարն արագաւոտ զընթացս ճանապարհին կատարէր: Եկն եւ էանց յերասխ գետն եւ ուղղեաց զսանձ երիվարին առ յԱմարէն քաղաք, եկեալ եւ եհաս անդ՝ ի վանս Գրիգորիսի: Զճանաչելով զնա՝ սիրով ընկալան հիւրասիրական եղանակաւ, յերեկոյին ի ժամ ճաշու պատրաստեցին զկերակուր եւ բերեալ եդին առաջի նորա: Առեալ եւ եկեր եւ էարբ զգինի. ընդ այն ժամանակս անխտիր ազգն պարսից ընդ ազգիս մերոյ ուտէին եւ ըմպէին, յոյժ սիրէին զմիմեանս, զի մի էր թագաւորութիւնն:

(10ա) ՅԱՂԱԳՍ ՏԱԼՈՅ ՁԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՀՕՐ ՄԱՆԿԱՆ ԱՆՏՈՆԻ

Ի սոյն ինչ ժամանակի տակաւին եւս Ստեփաննոս սուրբ հայրապետն կենդանի էր եւ ծերացեալ, ըստ խնդրանաց հօր Անտոնի առ ի տանելոյ ի տեսութիւն հայրապետին, ըստ նորին հրամանի տարեալ ի ներքս սենեկին եւ նստեալ սկսան բանալ զզրոյցս եւ խօսել՝ երկաքանչիւր զերկրէ զիւրմէ պատմել. մինչեւ անգամ ի յետին խօսակցութեան ետ ծանօթս այր այն, թէ վասն որո՞յ իրաց եմ եկեալ, քանզի կորուսեալ եմ զիմ որդին, եւ այժմ գտեալ, եւ դուք զայսմանէ զի՞նչ ունիք կարգադրել չգիտեմ, զոր ինչ ունիք ի մտի ձերում՝ կարող էք յայտնել: Ի նմին ժամու կոչեցին զԱնտոն ուրարակիրն՝ գալ տեսանել հայրն զի՞նչ կամի առնել, ինքն տացցէ պատասխանի: Եկեալ որդին ի ներքս՝ նշմարէր հայրն դիմացն գեղեցկագոյն եւ ի ծաղկահասակ՝ բարձր չափաւորութեանն. ունէր զարմանալի իմն տեսարան՝ ծիծաղադէմ, սեւաչեայ, լայնաճակատ եւ կարմրայտ եւ քաղցրախօս եւ քաջասիրտ, աներկիւղ, թեթեւամարմին եւ արագընթաց եւ մտասուր, զայս ամենայն տեսանելով, զի ո՛չ յաչս իւր երեւէին որդիքն հինկեքեան: Սկսան հայր եւ որդի բանալ զխօսակցութիւն, թէ ընդէ՞ր զիս թողեալ աստ ի քաղաքիս ի կարաւանի, եւ դու փախուցեալ յինէն՝ ո՞ր ուրէք գնացեր, շրջեցայ ի բոլոր քաղաքս՝ հարցանելով՝ (10բ) եւ ո՛չ կարացի գտանել: Իբրեւ գնացի ի տուն, մայր քո ո՛չ դադարէր յարտասուաթոր հարցանելոյն՝ նաեւ չտայր թոյլ ննջել սակաւ իմն հանգստութեամբ, զի ահա չափահաս էք եւ գիտես զգիրս, զօրէնս աշխարհի, եւ զերախտաւորութիւն ծնողաց, եւ զգութս, զկսկիծս վշտակրութեան: Արդարեւ երբէք չկարի հանդարտութիւն գտանել, վասն որոյ քանի ամք են ահա անցանեն, եւ նա միշտ թախանձէ զիս պաղատանօք թերեւս կարիցեմ եւ իսկ գալ եւ շրջիլ, զքեզ գտանել եւ տեսութեան մօրդ արժանացուցանել: Զայս ամենայն վերին երեսօքն պատրանօք խօսէր՝ գոնէ հնարիւք իմն կարիցէ խաբուսիւք բանիւ յիմարացուցանել զորդին եւ դիւրութեամբ տանել, բայց կնճիռն անիրաւութեան ծրարեալ ի ներքս առագաստէր, զի ո՛չ գիտէր, թէ Տէրն ասէ՝ ի նմին ժամու, զոր ինչ տացէ՝ զայն

խօսեսջիք, զի ո՛չ դուք էք, որք խօսիք, այլ հոգին Հօր ձերոյ[58]*: Սկսաւ որդին այլ իմն բանիւք պատասխանել, թէ՝ մեր Արարիչն Աստուածն՝ մարդն, որ անձնիշխան է ստեղծել, թէ ի՞նչ որ կամենայ կարող է առնել, մի՞թէ մարդս առաւելագոյն է քան զԱստուած, զոր ինչ կամի՝ կարէ առնել մարդս. եթէ զիս ակամայ յօժարութեամբ տանիցես՝ մի՞թէ անասնոց հաւասար զիս կարող էք կապել եւ պահպանել, զի այդ ձեր արարեալ խորհուրդն մարդկային տկարութեամբ է եւ ո՛չ Աստուածային խորին գիտութեամբ: Եթէ կամիս կատարեալ լինիլ, լռութեամբ պարտէս վե[րա]դառնալ ի բնակութիւնս եւ ժողովել զամենայն շարժական եւ անշարժական գոյս, հաւաքել աստ ի քաղաքս, եւ (11ա) դուք մկրտիլ սուրբ աւազանաւ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Լինիլ մարդ Աստուծոյ, եւ ո՛չ մարդասպանին: Եթէ ծնող ես իմոյ անձին՝ ընկա՛լ զբանս իմ եւ առանց յապաղանաց կատարեա՛, զի այս է առաջի Աստուծոյ հաճելի, քան զգանձս բազումս եւ զականս պատուականս: Հայրն զիմաստ բանին հաւաքելով ի միտս իւր՝ այնպէս երեւէր, զի ո՛չ բարեհաճէր հօրն բանից՝ չունէր բնաւ յօժարութիւն զկամս ծնողին կատարել:*

Հայր նորա գնայ ուղղակի ի Տավրէժ քաղաքն եւ առեալ զհրովարտակ, վերադառնայ ի սուրբ վանս Գրիգորիսի եւ ցուցանէ զհրովարտակն միաբանաց եւ որդւոյն. յո՛յժ սաստկութեամբ գրեալ: Քանզի անդ խոստացեալ է՝ ընծայել որդին քաղաքապետին, զոր եդեալ էր Թամուրլանկն: Աստանօր զբազում բանս մնաց գրելոյ, զի եւ ես գրեալ եմ յանցեալ հատորի: Վասն հրովարտակին խորհուրդ արարին. որդին ասէր՝ բնաւին չունիք ինչ բանս ասելոյ եւ խօսելոյ, միայն զիս օրհնութեամբ արձակեցէ՛ք, ես գիտեմ, թէ զինչ արժան է ինձ առնել. ընկալաւ յամենեցունց օրհնութիւնն եւ համբուրեալ զտապան սրբոյն Գրիգորիսի[59]*: Ընդ այն ժամանակս ելեալ՝ բազում ասպատակաւորք ի դաշտային տեղիս շրջէին եւ անկեալն ի ձեռս իւրեանց մերկ եւ սրախողխող արձակէին, վասն որոյ լեռնային ճանապարհաւ գնացին մինչեւ ի գագաթ լերինն, որ հայի յերասխ գետն եւ վերին կողմն Տիզափայտ*[60]*:*

---

[58] Հմմտ. Մատթ. ԺՀ, 19, 20, Մարկ. ԺԳ, 11, Ղուկ. ԺԲ, 11:

[59] Խոսքը Գրիգոր Լուսավորչի թոռ Մանուկ Գրիգորիսի տապանի մասին է: Վերջինս Վատնյան դաշտում 331/332 թ. նահատակվել է մազքթաց Սանեսան թագավորի հրամանով: Նրա աշակերտները իրենց ուսուցչի դին բերել են Արցախի Մյուս Հաբանդ գավառ եւ ամփոփել Ամարասի վանքի բակում: Գրիգորիսի գերեզմանի վրա 489 թ. Վաչագան Բարեպաշտ թագավորը դամբարան է կառուցել, որը գտնվում է ներկա եկեղեցու բեմի տակ:

[60] Դիզափայտ – լեռնաշղթա եւ լեռնագագաթ Արցախում: Կազմում է ջրբաժան Հակարի գետի եւ Իշխանագետի միջեւ, այժմյան ԼՂՀ Հադրութի շրջանում, բարձրությունը՝ 2380 մ: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ այս լեռան գագաթին են նահատակվել մազքթաց Սանեսան թագավորի որդիները եւ բազմաթիվ հավատացյալներ, որոնց քրիստոնեության էր դարձրել Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը: Սանեսանի զինվորները նրանց դիակները դիզել են ինչպես փայտը եւ այրել: Այդ օրվանից լեռը կոչվել է Դիզափայտ (տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 119), իսկ գավառը՝ Դիզակ:

(11բ) Յառաջագոյ զվիճակ իւր ինքն ընտրեալ էր, թէ որո՞վ մահուամբ փափագէր յաստի կենացս վերափոխել ի քաղաքն կենդանեաց. նաեւ գիտէր զկամս հօրն՝ եթէ շարժիցէ յաջ կամ յահեակ, իսկոյն ունի մահացուցանել զորդին, քանզի բարկութեամբ լցեալ էր: Զայս ամենայն գիտելով, կամէր արդարեւ իւրովին զինքն մատնել ի մահ, զի մի՛ կրկին անկանիցէ ի պիղծ դենս այլազգացն: Մինչ ելին ի գագաթ լերինն, անդանօր խաչակնքեալ ի դէմս իւր. եւ ասաց. Տէ՛ր Յիսուս Քրիստոս, յառաջագայ ի մարգս դալարիս եւ տափարակ տեղին ընկա՛լ զհոգի իմ, զի մի՛ անցանիցեմ ի Հայաստանէ. ասաց զայս բան եւ սկսաւ արագաոտն գնալ՝ զառ ի վայր, ի նոյն նշմարեալ տեղին նպատակ կալեալ, փոքր փոքր սաստկացուցանէր զփախչիլն: Գիտաց հայրն, որ կամի ազատութիւն, գոչեաց զկնի նորա՝ թէ խաղաղ գնա՛յ, եւ նա կամէր բարկացուցանել զհայրն, ասաց՝ ո[ր]սորդին շունն արագ կարող է զկնի տեառն իւրոյ գնալ, ընդէ՞ր ծլութեամբ ընթանաս: Զինչ եղանակաւ իցէ՝ անդանօր վկայելոց էր նահատակութեամբ. ասաց՝ մի՞թէ ես շուն իցեմ. ասաց՝ վատթարագոյն էս քան զշուն, եւ կատարեա՛ զկամս հօր քո սատանայի: Ի նմին վայրկենի մերկացուցեալ սուրն ի ձեռին, եհաս եւ եհար ուժկին զգագաթն, զերկու մասուն արար գլուխն. եւ իսկոյն աւանդեաց զհոգին առ Արարիչն իւր:



Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Գտչայ վանուց» աշխատության առաջին էջը